

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄՈՏ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-ԻՆ
ԺԱՄԸ 12:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. երևան
Նիստը վարող՝**

Ն. Փաշինյան ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)

խորհրդի անդամներ՝

Մ. Գրիգորյան ՀՀ փոխվարչապետ

Ռ. Բադալյան ՀՀ արդարադատության նախարար

Ռ. Վարդազարյան ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ

Ա. Դավթյան ՀՀ գլխավոր դատախազ

Ե. Խունդկարյան ՀՀ վճարբեկ դատարանի նախագահ

Ա. Թաթոյան ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

Ս. Գալյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Խուդավերդյան Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի
հանձնաժողովի նախագահի տեղակալ

Վ. Վարդանյան ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական
հանձնաժողովի նախագահ

Ն. Զոհրաբյան ՀՀ ԱԺ-ի մարդու իրավունքների պաշտպանության և
հանրային հարցերի մշտական հանձնաժողովի
նախագահ

Լ. Մակունց «Իմ քայլը» խմբակցության ներկայացուցիչ

Շ. Իսայան «Բարգավաճ Հայաստան» խմբակցության
ներկայացուցիչ

Ա. Սամսոնյան «Լուսավոր Հայաստան» խմբակցության
ներկայացուցիչ

Ս. Այվազյան «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն
կենտրոնի գործադիր տնօրեն

- Դ. Իրաննիսյան Իրազեկ քաղաքացիների միավորման ծրագրերի համակարգող
- Շ. Դոյդոյան Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Մասնակցում էին՝

- Լ. Մազմանյան ՀՀ վարչապետի խորհրդական
- Վ. Կարապետյան ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
- Ն. Սարգսյան ՀՀ վարչապետի օգնական
- Լ. Ղալթաղչյան ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Ս. Բարսեղյան ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակի ղեկավար
- Ա. Մանուկյան ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի խորհրդական
- Մ. Գալստյան ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ
- Վ. Ասլանյան ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
- Ա. Գրիգորյան ՀՀ վարչապետի աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի և մոնիթորինգի վարչության ավագ մասնագետի պաշտոնակատար
- Ա. Հարությունյան ՀՀ վարչապետի աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի և մոնիթորինգի վարչության մասնագետ
- Ա. Սողոյան «Հայկական հոգեբուժական ասոցիացիայի» հրավիրյալ ներկայացուցիչ
- Ս. Ավագյան Նախկին կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից գործող նախկին անկախ փորձագիտական հանձնախմբի անդամ

Ընդունելի գիտություն ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթն այն մասին, որ ՀՀ կառավարությունն ունի կոռուպցիայի դեմ ամբողջական պայքար մղելու քաղաքական կամք, այս հարցում հետևողական է և շարունակելու է լինել հետևողական: Ընդ որում, երբ խոսվում է այն մասին, որ Հայաստանից կարողացել ենք արմատախիլ անել համակարգային կոռուպցիան, ըստ էության, այս արձանագրումը երևում է նաև հանրության արձագանքից, որովհետև մայիս ամսին անցկացված հարցումներով Հայաստանի քաղաքացիների ավելի, քան 84 տոկոսն արձանագրել է, որ ինքն ականատես չի եղել, այսինքն՝ չի առնչվել կոռուպցիայի դեպքերի, ինչը, իհարկե, շատ կարևոր արձանագրում է:

Սակայն վերջին մեկ տարվա ընթացքում կոռուպցիայի դեմ պայքարի առումով առկա են նաև որոշակի ինստիտուցիոնալ խնդիրներ և բարդություններ՝ այն առումով, որ կոռուպցիայի դեմ պայքարը և կոռուպցիոն հանցագործությունների հետաքննությունները, քննությունները և առավել ևս կոռուպցիայի արդյունքում հասցված վնասի վերականգնումները չեն ընթանում այն ծավալներով և մասշտաբներով, ինչն ակնկալվում էր: Այստեղ առկա են բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ խնդիրներ, և այդ խնդիրներից ոչ երկրորդական տեղ են զբաղեցնում ինստիտուցիոնալ խնդիրները: Այդ ինստիտուցիոնալ խնդիրների մի մասը նկատելի է առաջին հայացքից, երկրորդ մասը՝ ոչ: Հենց այս առումով անհրաժեշտ է լինել շատ հետևողական, որպեսզի որոշակի ինստիտուցիոնալ նոր կառուցակարգերի հիմնամաք և նոր կառուցակարգերի ստեղծմամբ ուժեղացվի կոռուպցիայի դեմ ընթացիկ պայքարը: Այս ընթացքում բավական ծավալուն և որակյալ աշխատանք է կատարվել՝ կողմնորոշվելու համար հակակոռուպցիոն ռազմավարության ուղղությունների մեջ և արձանագրելու կոռուպցիայի դեմ պայքարի հետագա ինստիտուցիոնալ զարգացման պատկերացումները:

Քաղաքական արձանագրումը, որն այսօր կարևոր է, հետևյալն է, որ կոռուպցիայի դեմ պայքարում ՀՀ կառավարությունը լինելու է հետևողական, և այստեղ բացառվում են

փոխզիջումները: Ձևակերպվել է քաղաքական խնդիր՝ Հայաստանի Հանրապետությունում ձևավորել և ձևակերպել կոռուպցիայի նկատմամբ հանրային զրո հանդուրժողականություն: Սա քաղաքական այն նպատակն է, որը ՀՀ կառավարությունը պատրաստվում է իրագործել:

1. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման մրցույթի արդյունքների ներկայացում

(Ռուստամ Բադասյան, Նիկոլ Փաշինյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջարկությամբ մշակել և ՀՀ վարչապետի հավանությանը ներկայացնել 2019 թվականի հունիսի 24-ի «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ոտտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 808-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին նախագիծ՝ սահմանված հինգ հասարակական կազմակերպությունների շրջանակներում նաև հասարակական կազմակերպությունների միությունները ներգրավելու նպատակով՝ միաժամանակ նախատեսելով լրացուցիչ երկու տեղ՝ գործարար հասարակական կազմակերպությունների համար:

2. «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման լրամշակված նախագծի ներկայացում

(Ռուստամ Բադասյան, Նիկոլ Փաշինյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ զեկույցը:

2) ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադալյանին՝

ա. հաշվի առնելով ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի առաջարկությունը՝ դիտարկել հակակոռուպցիոն մարմինների ներկայացուցիչների համար սոցիալական երաշխիքների տրամադրման, մասնավորապես, ընտանիքի անդամների պարտադիր բժշկական ապահովագրության համակարգ ներառելու հարցը և ըստ նպատակահարմարության այն արտացոլել ռազմավարական ծրագրում,

բ. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Խուդավերդյանի առաջարկությամբ ևս մեկ անգամ քննարկել բարձրաստիճան պաշտոնատար անձանց մերձավոր ազգականների հայտարարագրման սկզբունքները՝ դիտարկելով իրավիճակային մեթոդի կիրառումը,

գ. «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերջնական տարբերակը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ